

[illegible]

359

Կատանդ. Նու. Գորիս : 14 Մարտի :

Հանկարի էր որ հնուցմէ աս սովորութիւնը մեր
մէջն ալ մտած ըլլար : Դժբաղդութիւն, ինչպիսի
շատ բարեմասնութիւններէ, ասկէ ալ օտար մտ-
ցած է մեր ազգը : Մինակ աղօտ յիշատակու-
կայ Թատրոնական խաղուց Սանդակունի
ուրիշ վարդապետաց ճառերուն մէջ, որոնք
մենեկն կարգաւորեալ Թատրոնի մը քարտիչ
էն տար, և Պլուտարքոսին մէջ Արտաշէսի ին-
տերական գրութեանց յիշատակութիւն, որոնց
հետքը չկան :

ի գործ դնել, որոնք այս հարկաւորութիւնը կարող
ըլլան լեցնելու :

Այս հրապարակական ընդհանուր ցոյցը չորս
մասի պիտի բաժնուի :

Այսին պիտի ըլլան անգործ նիւթեր և այնպիսի
հաստուածներ (բրտուրի) որ կարող ըլլան բնա-
կան արտադրութեանց յառաջդիմութիւնը բա-
ցայայտելու որոյ վրայ մարդկային շարտարու-
թիւնը ի գործ ածուեր է :

Երկրորդ՝ մեքենական գործիքներ երկրագոր-
ծութե համար, ձեռագործներու, արհեստակեր-
տուածոց և ուրիշ բաներու համար, մեքենական
գիւտեր որ կարող կըլլան յարգը աւելցնելու
այն գործիքներուն, որոնք մարդկային իմաստու-
թիւնը ի գործ կըդնէ՝ բնութեան արտադրու-
թեանց օգնելու համար :

Երրորդ՝ այնպիսի ձեռագործ բաներ, որ յան-
դիման կըկացուցանեն մարդկային շարտարութե
գործածութենէն յառաջ եկած վախճանը բնա-
կան արտադրութեանց վրայ :

Չորրորդ՝ բանդակագործութիւններ (գալէմ
իշի, օյմա), օրինակներ, հնարագիտական արհես-
տը ընդհանրապէս, որ կարող կըլլայ բացայայտ
ցուցնելու մարդկային շարտարութեան այս
տեսակ բաներու մէջ գործածած յաջողակու-
թիւնը և ընտիր ախորժակը :

Գործակալները կըպարտաւորին հոգ տանիլ ու
բողբելու համար ընդարձակութիւնը տեղւոյն, որ
պիտի հարկաւորի այս բաներուն կարգաւ գրուե-
լուն, և հետեւաբար պետք է որ վեր ի վերոյ
իմանան որքանութիւնը իրաց, որ զանազան եր-
կիրներէն միտք ունին յուղարկելու : Այս առա-
ջին տեղեկութիւնը ըլլալու է, որ պիտի խնդրեն
անմիջապէս, երբոր հաղորդակցութիւնը հաստա-
տուի ամէն կողմանց հետ : Բաց յայտնանէ գոր-
ծակալները ընտրութիւններ պիտի ընեն տրուելու
բաժակերութե վարձերը կարգադրելու համար,
և թէ ինչ պայմաններով պիտի ըլլան : Այս բա-
նին համար մանաւանդ հարկաւոր է թղթակցու-
թիւնը մը օտար ազգաց հետ : Այլ պէտք է որ
գործակալները միջնորդութիւն մը ունենան, ու
բուն ձեռք կարող ըլլան հաղորդելու օտար եր-
կիրներուն բնակչաց այն կարգադրութիւնները,
որ հրապարակական ցոյցին առաջնորդութեանը
համար ժամանակ առ ժամանակ կրնան որոշել,
օրինակի համար կան բաներ որ չեն կրնար ընդու-
նուիլ իրենց մեծութեանը պատճառաւ, կամ
զանոնք անմիջապէս անհնար ըլլալուն, և
ուրիշ պատճառաց համար, բաց յայտնանէ ծա-
նուցանել հարկ է օտար ազգաց թէ մը ժամանակ
պետք է յուղարկուին այս բաները, և ինչպայ-

մաններով պիտի ընդունուին :

Առաւել մանրամասն տեղեկութիւններ տալ
այս տեղս անօգուտ է. քանզի արդէն ըստածնե-
րէն ըրտ Բէլլըրթթընը պիտի խմանայ թէ հաղոր-
դակցութեան շաւիղները բացուելուն պէս՝ գոր-
ծակալները շատ նիւթեր ունին, որոց վրայ ու-
ղագրութիւնը պիտի հրաւիրեն օտար երկիրնե-
րուն, որոնք կուզեն մասնակից ըլլալ այս գործո-
ղութեանը : Այսին պէս ալ կըծանուցանեմ թէ
խիստ կարեւոր է որ ժամանակ չանցնի այս հա-
ղորդակցութիւնները ընելու. վասնզի շատ խըն-
դիրներ կան, որոց վրայոք հարկ է որ գործակալնե-
րը ժամ մը յառաջ բացատրութիւններ ստանան :

Պատիւ համարիմ ինձ ողջունել և այլն :

Ի պաշտօնատեան վաճառականութեան 3-15 Յունիսի 1850 :

Ալեքս. Զ. Նորթոն :

ԳԱՂԱԻԱ. Փարիզ, 8 Մարտի ըստ Նոր տուարի :

Բաղադրական անձինքը մասնաւորապէս աղագային
երեսփոխանաց ընտրութեանը վրայոք զբաղեալ
են. որոց մեծագոյն մասը, ըստ երևմանց, ընկե-
րական կուսակցութեանն պիտի ըլլայ : Թէպէտեւ
առայժմ անգործութիւնը առեւտրէս կըտիրէ գրե-
թէ բոլոր Գաղղիոյ մէջ, սակայն միտքերը հան-
գարտ չեն, զանազան կուսակցութիւնները կըզօ-
րանան, կըտկարանան, կըմիաբանին և կըբաժնուին
մէջերնին, քաղաքական պարագայից համեմատ.
վերջապէս անդադար փոփոխութե մէջ են միշտ :
Բայց մէկ բան մը կայ, որուն վրայ տարակու-
սութիւն չկրնար ըլլալ, այսինքն հասարակապե-
տական կուսակցութիւնը օր քան զօր տկարանա-
լու վրայ է, և սահմանադրական միապետութե,
այսինքն թագաւորութեան կուսակցութիւնը
կըզօրանայ և կըյառաջանայ :

Փարիզի Սենթիէթ անուն օրագիրը հետեւեալ
յօդուածը կըհրատարակէ մարտի 1 ամսաթուով :
«Կառավարութիւնը նամակներ ընկալաւ այսօր
Ռուսիոյ, Աստրիոյ և Ֆրանսիոյ տէրութիւններէն :
Այս նամակները յոյս կուտան մէկ թէ Լեւոսայի
խաղաղութիւնը պիտի չփոխուի » :

Երկրի տարւոյս մէջ տէրութեան ընելու
բոլոր ծախսը գումարը որոշելու համար գործա-
կալաց յատուկ ժողով մը սահմանուած ըլլալով,
այս ժողովը իւր կարծիքը յայտնեց ընդարձակ
յայտարարութեամբ մը, որ 204 երես գրուած
մընէ : Երեւալ յայտարարութեը համեմատ 1850
ամին տէրութե բոլոր ծախսը գումարը որոշեալ
է 1427 միլիոն, 845487 ֆրանքի : Այս հաշիւը
անցեալ տարուան եղած ծախքին հետ բազմա-
տեւով, 84 միլիոնէն աւելի խնայողութիւն եղած

է : Թէպէտեւ 1849 ամին ծախքը ևս նախընթաց
ամին հետ բաղդատելով 70 միլիոնի չափ խնայո-
ղութիւն եղած էր, բայց և այնպէս 1849ին
ծախքը նոյն տարուան եկամուտէն իջեցունելով,
290 միլիոն ֆրանք բաց կըմնայ : Երկրորդ
աշխատանք պակասութիւնը յառաջ կուգայ բանի
մը հարկաց (վերկի) ջնջուելէն, որ վերջի յեղափո-
խութեան ժամանակը ի գործ դրուեցաւ :

ՌՈՒՍԱՍՏԱՆ. Ռուսիայի եւրոպական մասին
ժողովրդեան թիւը, (ըստ վերջի աշխարհահամա-
րոյն որ եղաւ քառասուն և ինն նահանգաց մէջ
որոցմէ կազմեալ է յիշեալ ընդարձակ երկիրը)՝
կըհասնի այժմ 54 միլիոն 92300 հոգիի : Այս ժո-
ղովրդեան գումարը տեղ տեղ փոփոխութիւն կը
ստանայ. օրինակի համար՝ չորս նահանգաց մէջ
Իւրաքանչիւր քառակուսի մղոնի վրայ 2000—2200
բնակիչ կըհաշուուի : Եթէ նահանգաց մէջ նմա-
նապէս Իւրաքանչիւր քառակուսի մղոնի համար
1500—1800 բնակիչ կըհաշուուի : Հասն և վեց
նահանգաց մէջ՝ Իւրաքանչիւր քառակուսի մղոնի
համար 1000—1400 բնակիչ, տասն և մէկ նահան-
գաց մէջ՝ 500—850 : Ռ-Թ նահանգաց մէջ՝ 150—
450. և երեք նահանգաց մէջ՝ գրեթէ 100 բը-
նակիչ կըհաշուուի Իւրաքանչիւր քառակուսի մղոն
երկրի համար :

ՅՈՒՆԱՍՏԱՆ. Աթէնք, 7-19 Մարտի : Այնքին Բրի-
դանիոյ կառավարութեան հետ եղած վեճը տա-
կաւին վախճան մը չընկալաւ : Գաղղիոյ հասարա-
կապետութեան կողմանէ եկած մօտիւ Լըօ պաշ-
տօնատարը՝ այս գործոյն վերաբերեալ նամակնե-
րը և ուրիշ գրուածները կըբնէն ու կընայի, և
յետո՛ւ այնորիկ իւր կարծիքը և որոշումը գրի առ-
նելով պիտի հաղորդէ Յունաց կառավարութեը,
նմանապէս վստահալով սըր թոմաս Վուայլը (նգ-
ղիոյ գեսպանին որ յԱթէնս) : Ապայն կերեւի թէ
Հեղինական կառավարութիւնը յամառելով իւր
առաջի որոշմանը վրայ, փաստացի հատուցման
սկզբունքը պիտի չընդունի. բայց միւս կողմանէ
հաստատութեամբ գիտեմք թէ Գաղղիոյ կառա-
վարութիւնը կըխոստովանի թէ հատուցում պէտք
է ըլլալ. և իւր բարեկամական ծառայութիւնը
ուրիշ նպատակ չունի, բայց միայն այս հատուց-
ման պայմանները բարեկամօրէն ի կարգի դնել :

Ռուսաց կառավարութեան այս վեճին վրայոք
եկած լուրերը յայտնի են, այսինքն յիշեալ տե-
րութիւնը չուզէր միջամուխ ըլլալ այս գործոյն,
որուն Գաղղիոյ կառավարութիւնը արդէն ձեռք
զարկած է, և կըյուսայ թէ այս հասարակապե-
տութեան միջնորդութեամբ շուտով վախճան

գոյն թատրոնը, որնոր ազգերնուս կըբաղձանք,
Երկու կերպ թատրոն կայ. մէկը առանձնական,
միւսը հասարակաց : Առջինը, ինչպէս էր մեր
գտնուածը, և ինչպէս ատենով Եւրոպացի իշ-
խանաւորներ կըգործածէին, հրաւիրանօք կըլլայ
առանց հրաւերի մարդ չկրնար երթալ հոն, ու
աս կարգը երեւոյնուին պէս, խառնակութեան
թատրոն կըգաւառայ : Երկրորդ և անտարակոյս
ընտրելազոյն տեսակը՝ հասարակաց թատրոնն է,
ուր ամէն մարդ կրնայ երթալ, կեդրոն ընկերա-
կան միութե, միանգամայն զուարճալի զօտարան
ու բարոյական կըթափառուի մը : Այս յատկութիւնը
մէյմէկ մասնաւոր բարիք են թատրոնին. խաղե-
րէն կեղեկ բարոյական արդիւնքն ու անմեղ զօ-
տանքը, որոնցմով զբաղած շատ մարդիք շատ փա-
սակար զուարճութիւններ և գէշ սովորութիւններ
կրնան ետ կենալ : Իսկ ընկերական միութեան
կեդրոն ըլլալովն է որ ազգերնուս մէջ մարդա-
կարութեան ու ընկերակցութեան խղճաւ կա-
պերը կրնայ նորոգելով պնդել, իրարու վարժել
ու մօտեցնել ազգին անհատները, հասկնել ու
համոզել թէ մերձաւորութեամբ մարդիք զիրար
չեն ուտեր, ու մարդասէր և ընտել բնաւորութե
զիրար անարգած չեն սեպուիր, այլ պատուած,
թէ սէրը, գրելու տեղունական պատուիրաց, ու
մարդավարութիւնը, սկիզբ քաղաքական օրինաց,
ազգի մը բարգաւաճութե գլխաւոր պայմաններն
են, և թէ ատոնց պակասութիւնն է մեր կոր-
ծանման պատճառը : Հասարակաց թատրոն մը

ազգերնուս կըբաղձային մանաւանդ, որպէսզի
աս արդիւնքներուն մասնակից ըլլային հանդիսա-
կանք՝ տեսարանէն քաղած բարոյական օգուտնե-
րուն ու զուարճութեանը հետ : Եւ գուցէ, ու
նայնամուտութիւնը, դատարկապարտութիւնն, ու
զրպարտութիւնը, որ անզբաղ ու պարսպ գրուի-
նելու զբաղմունք ու վերքն են, տեղի տային ա-
ւելի արժանաւոր նիւթի մը առջև, ինչպէս է
թատերական արուեստին և անոր կատարելագոր-
ծութեան միջոցներուն վրայ տեղեկանալ, խօ-
սիլ ու վիճել :

Եւ այսպիսի մտքով վառուած թատերասէր
ներուն, կըհամարձակինք հետեւեալ առաջար-
կութիւնը ընելու. թատերական ընկերութիւն
մը հաստատել, որուն նպատակը ըլլայ.

Ա. Ստորագրութիւն և ստակ ժողովը ազգէն,
աս արտօնութեամբ ստորագրելը համար որ կա-
րենան թատրոնը երթալ տարւոյն ամբողջ խա-
ղացած ժամանակը :

Բ. Իրեւան ընտրել թատերական գործառ-
նութեանց յարմար ու կատարեալ ձիւքերը ու-
նեցող անձինքներէ բաղկացած :

Գ. Ինտր թատերագործութիւններ շարադրել
տալ և ըստ արժանւոյն վարձատրել, որով բա-
նաստեղծական աշխոյժը վառի ու նորոգի ազգեր
նուս մէջ, և թէպէտ ուշ, մեր դրականութիւնն
ալ աս պարծանքն զուրկ չմնայ :

Դ. Ինքարձակ սրահ մը պատրաստել տեսա-
րանի ու հանդիսարանի յարմար պայմաններով :

Բնականաբար մեր առաջարկութիւնն ու յոր-
դոր մասնաւորապէս անոնց կըվերաբերի, որոնք
կամ թատերաց գրութեան կամ դերասանութե
և կամ հանդիսին ներկայութե փափաքող են,
և չենք տարակուսիր, ազգերնուս բերանները նայե-
լով, որ իրենց ջանքը լիով պատկուի, թէ և դը-
ժաւարութիւններու հարկ ըլլայ յաղթել, որով
ոչ միայն բանաւոր օգուտներու, այլ և նիւթա-
կան շահու ապագեղ մ'ալ կըբացուի ազգեր
նուս մէջ : Այդամ մը դարձեալ թատրոնի պա-
կասութիւնը ազգի մը թշուառութեանց կարգը
կրնանք սեպել, և ատոր հակառակը բարիք ու
ճոխութիւն մը : Այլ գլխաւոր բանի մը միայն
գործադրութիւնը, առանց որոյ թատրոնը պա-
կասաւոր կըսեպուի, գիւտար կերեւայ. բայց
քիչ ժամանակէ գուցէ անկարելի չըլլայ. իսկ հի-
մակուան համար կարծենք թէ հին Յունաց դի-
մակաւոր դերասաններուն բռնած ճամբան, ու
րոնք էրիկ մարդիք կնկան կերպարանքի կըծպտէին՝
կրնար կերպով մը գործադրուի : Խօսքերնիկ կը
ըմնցնենք հետեւեալ խնդիրը առաջարկելով.
«Ինչ է աւելի անմիջապէս օգուտակար, մանա-
ւանդ արեւելեայց բնաւորութեանը նայելով, ա-
ռանց կնկան եթէ կանամբ թատերական խաղուց
գործադրութիւնն : Այնք երկրորդը կըկարծենք,
ու թէ ինչու, ուրիշ անգամ, եթէ հարկը պա-
հանջէ, կըզառնանք նոյն նիւթին վրայ :

մը պիտի ստանայ յիշեալ վէճը : Ուստի աւտաբէն գործող պաշտօնեայ վսեմափայլ Նէսրընտ կոմսը արդէն գրած է պարոն Պրինսիփին՝ որ Ուստայ դեսպանն է ի յնտոն, որպէս Վալդիոյ դեսպանին ի գործ դրած քաղաքականութեան համեմատ վարուի այս խնդրոյն մէջ :

Այս ամէն գրածներէն յայտնի կը տեսնուի թէ Հելլենական կառավարութիւն վերջապէս պիտի ստիպուի Սեփին իրիդանիոյ խնդրած իրաւացի հատուցումը վճարել : սակայն ցաւալի է տեսնել, որ իւր կամակորութեամբը այսքան մեծ փնտռող պատճառ կը լըյալ իւր ազգին :

Մէջքի լիքն անուն լրագիրը իւր թերթին մէջ, որ ի 27 փետրվարի կրցաւ մեծապէս Հելլենական կառավարութիւն բռնած անօգուտ կամ լաւ եւս է ըսել փնտասկար քաղաքականութեանը վրայ այս գործոյն մէջ, որուն դժբաղդ հետեւութեանը նախատես ըլլալով, չգող արեցայ : երբեք կըսէ, խորհուրդ տալու կառավարութեանը, որ զգուշանայ միջամտել ընել օտար տէրութիւններ : որոց միջնորդութիւնը օգուտ մը չկրնար ընել : Վասնզի կարելի էր արդեօք ենթադրել թէ Վալդիան, որ այնքան մեծամեծ քաղաքական գործքեր ունի կատարելու Նիգիլիոյ տէրութեանը հետ, պիտի ուզէ հակառակիլ անոր՝ այս օրինակ պզտիկ վէճի մը համար : Յիշեալ լրագիրը կը կրկնէ իւր խրատները Հելլենական կառավարութեանը, որ չխաբուի այսուհետեւ դուրսէն դեռ սպասելով ազգին ցաւոցը : այնպիսի ցաւ մը, որ տէրութեւն բոլոր զօրութիւնը եւ ուժը կըսպասէ : Թող համարուի Յունաստանի կառավարութիւնը, թէ փրկութեան շաւիղը իւր անկեղծութեան մէջ կը գտնուի : Թող տայ, կըսէ, պահանջեալ հատուցումը, եւ անմիջապէս անգլիական նաւատորմի վրայ պիտի հեռանայ Յունաստանի ծովերէն : եւ յետ այնորիկ հաւատարմութիւնը ի գործ դնելով ասհմանադրական կարգաւորութիւնները (սին տաղմա), վերստին պիտի ստանայ Նիգիլիոյ տէրութեւն համակրական վաղեմի սէրը : Սեփին իրիդանիոյ մէջ որ Յունաստանի քաղաքական փոփոխութիւնը ամբողջապէս հաստատուն պահուի : բայց երբոր մէկը առանց կրից եւ առանց կողմնապահութեան կը խորհի թէ ինչ կերպիւ կառավարել ցաւ Յունաստանը մինչեւ ցայսօր, եւ որքան յետախաղաց բայեր ըրաւ, երբեք, կըսէ յիշեալ լրագիրը, կը խորհի մէկը այս բաներուն վայրօք, անտարակոյս այս քաղաքական փոփոխութիւնը մեծ փոփոխութիւն մէջ կը տեսնէ :

Ստանդարտ լրագիր անուն յունարէն լրագրոյն մարտի 6-18ին մէջ կը կարդաւ :

« Պ » : Կրօ արտաքին կարգի գործակալին պաշտօնին վրայօք մինչեւ ցայսօր արուած մէկնութիւնները շատ ճիշդ չեն երեւիր : Կը հաստատեն թէ այս քաղաքագէտ անձը մեծ ու անդուլ խնամով կը քննէ այժմ բոլոր պաշտօնական գրուածները, որ Նիգիլիոյ պահանջմանը կը վերաբերին, եւ յետ այնորիկ պիտի յայտնէ իւր կարծիքը քառաձայնութիւնով եւ կատարեալ արդարութեան վրայ հիմնած : Այս գրաւոր աշխատութիւնը լինալուն պէս, պիտի հաղորդուի, կըսեն, մեր կառավարութեան, նմանապէս Սեփին իրիդանիոյ դեսպանին :

« Սիբերի » մեզ յուսալ թէ կարգաւորութեւն այս կերպը բարեկամող եւ շուտ վախճան մը պիտի ունենայ : քանզի թէ պէտք է այժմ մեր նաւահան գիտնները ազատ են, սակայն մոռնալով չէ թէ մեր նաւերէն շատերը, որոնցմէ մէկ քանին բեռնաւորեալ, գրաւ (բէհին) կը մնան անգլիական նաւատորմի թուր, եւ քանի որ այս աղէտալի վէճը անկատար կը մնայ, Յունաստանէն դուրս գտնուած նաւերը բեռն չեն կրնար գտնել : Այս բանը մեծ փնտներ կը պատճառէ մեր նաւավարաց, մանաւանդ այս եղանակին մէջ որ սե ծովուն նաւարկութիւնը բացուելու վրայ է :

« Նիգիլիոյ » մեզ անտառները ըլլալ : ուստի ինչ որ կը զգեն թող ըսեն կառավարութեւն լրագիրները, բայց չձմարիտը այն է, որ բոլոր հասարակութիւնը ստիպուի այս դժբաղդ գործոյն : Վասնզի ամէն մարդ գիտէ, նոր օրինակաց փորձով, թէ մեր կառավարութիւնը՝ երբոր ժամանակը կանցնի, այնպէս ժամանակը կը լըյալ խօսք մտիկ ընել :

Լու : Դողմուրդը իւր պարտաւորութիւնը ըրաւ մեծ համբերութեւն ցուցնելով եւ խտուած կամբը այս է ըսելով, ուրեմն կառավարութիւն ալ թող իւր պարտաւորութիւն ի գործ դնէ մեր այս դժբաղդուեց վախճանը փութացուցանելով :

ՔԱՆԱՔԱՆ ԼՈՒՐԻՔ

Ձմեռնիս, 17 Մարտի :

Ինչպէս մեր նախնիքաց թերթովը ծանուցեր էմք, որոց Հախիթմանց նորակաւոյց դպրատունը ամսոյ 8ին շորեքաթի օրը բացուեցաւ : Նոյն օրը 55 աշակերտութիւն մէկէն եկան : հետեւեալ օրը 90 հոգիի հասաւ անոնց թիւը : վերջապէս մինչեւ ցայսօր 160 Տոմսակ ընդունելութեւն տրուեցաւ : եւ երկրորդութիւն չկայ թէ շուտով երկու հարիւրի պիտի հասնի այս դպրատան ուսմանը հետեւող աղջկանց թիւը :

Կարեն բերկրալի է մեզ փութալ հրատարակել այս բարեկամաց դիպուածը : որ իզմիրի հայկազան աղջկանց բարեկրթութեան համար ունեցած եռանդը եւ յօժարամտութիւնը, նմանապէս անոնց ծնողաց ուսումնասիրութիւնը եւ բարեպաշտութիւնը կը ցուցնէ :

Սրբոց Հախիթմանց դպրոցին մէջ մեր ծաղկահասակ աղջիկները բարոյական կրթութիւնն են եւ համեմատ վարքէն ետեւ պիտի սովորին : 1. Հայերէն կարգալ եւ գրել, 2. Բերեքանսէթիւն, 3. Թուաբանութեան սկզբունքը, 4. Հայահարգութեան սկզբունքը, 5. Գեղեցիկագրութիւն, 6. Համառօտ քրիստոնէական վարդապետութիւն, 7. Գաղղարէն : Այլեւ պիտի սովորին ասորեգործութեան վերաբերեալ ամէն տեսակ գործքեր, բարակ կարեր, պատուական օյանք, զանազան կերպքակ եւ ձեռնոց գործքեր, բոլոր ձեւեր եւ կարել, ու եւրոպական շապիկ կարել, եայլն :

Այսպիսով յիշեալ դպրատան մէջ մէկ բանիբուն վարժապետ եւ երկու վարժապետուհի կարգեցան : երեքն ալ Հայ : իսկ գաղղարէնի վարժապետը քանի մը ամիսէն ետեւ պիտի դուրս : քանզի հայերէն բերկրականութեան համաձայնութեանը Հասած գաղղարէն սկսիլ արդիւնաւէտ :

Նախնիքին ընդհանուր կուսակալ բարձր պատան Հախիթմանց տնօրէնութեամբ իզմիրի բոլոր աւուած փողոցները, մանաւանդ Հայոց թաղիները ամէնքն ալ պիտի յատակուին (տէօ չէմէ էթմէք) : Այս բարեկարգ տնօրէնութեան հարկաւորութիւնը ժամանակէ մը ի վեր կը զգացուէր : վասնզի շատ փողոցներ կան, ուսկից անցնել խիստ դժուար եւ վտանգաւոր է, մանաւանդ անձրեւային ժամանակները :

Իզմիրի Նիգիլիոյ հիւպատոսարանին առաջին թարգման մեծապատիւ Խուսեմեան Յոհաննէս արդայն անցեալ ուրբաթ օր աւստրիական շոգե նաւով մեկնեցաւ Կոստանդնուպոլիս երթալու մասնաւոր պաշտօնի մը :

Պէրութի Լաստիոյ ընդհանուր հիւպատոս մօսի Ռոտովի () Կիտլ ամսոյ 9ին հասաւ Իզմիր թրիտեան գալով, եւ 13ին վերստին մեկնեցաւ իւր պաշտօնին երթալու Պէրութի աւստրիական շոգենաւով :

Հնդկաստանի անգլիական ընկերութեան շոգենաւը Նիկիթի անուն Պարայէն Գալով յունվարի 18ին հասեր է ի Պաղատա Տիգրիս գետին վրայ նաւարկելով : Յիշեալ շոգենաւը որուն մէջ շատ ճանապարհորդներ կան եղեր, պաշտօնական նամակներ բերեր է Գեմպէլ զօրապետին որ Սեփին իրիդանիոյ կողմանէ քաղաքական գործակալ եւ հիւպատոս է յիշեալ մայրաքաղաքը :

Պաղատան կրքերն, թէ հին քաղաքի մը աւերակները գտնուել են, որուն չընկալ պատուարները տակաւին անփնտ կը մնան : Այս քաղաքը Վեսիֆոնէն քանի մը փարափ հեռու է :

Արտանդնուպոլիսէն կը ծանուցանեն մեզ թէ փետրվարի 25ին շաբաթ օրը, որ մեր բազմութիւնը հայրապետին սրբոյն Սահակ Պարթևի տօնախմբութեան տարեդարձն է, փառաւոր հանդէս մը կատարուել է սուրբ Սահակեան ընկերութեան ուսումնասիրներ որ ի Սամաթիա : Այս բարեկարգ դպրոցի հոգաբարձուաց տնօրէնութեամբ, ի սկզբանէ անտի սովորութիւն եղած է, որ ամէն աշակերտները հինգ տաղաւ

ւարներէն ի գատ, նաեւ այն օրը կը հաղորդուին կենարար մարմնայ եւ արեան Տեառն մերոյ Վրիստոսի : եւ հետեւեալ օրը հարցաքննութիւն կը լըյալ անոնց տարեկան ուսմանը եւ քրիստոնէական վարդապետութեանը վրայօք՝ ըստ աւանդութեան Հայաստանեայց Կաթողիկէ ուղղափառ սուրբ եկեղեցւոյ : Իւ համարեալ թէ անոնց տարեկան ամէն սորվածներուն արդիւնքը իրենց հայրախնամ պաշտպան յիշեալ սուրբ Հայրապետին առջեւ կը դրուի :

Մեր այս բարեկարգ եւ ազգափրկական սովորութիւնն է, որ այս տարի եւս սովորական չբեղ հանգիսի ի գործ դրուել է : ի Սամաթիա, յարախութիւն եւ ի միսթարութիւն սրտի բոլոր հայազգի հասարակութեան :

Պուստապատի անգլիական դպրոցը, որուն բացուելը շատ ժամանակ չկայ, յառաջագէտ կը զարգանայ ամէն կերպ բարեկարգութեամբ եւ հարկաւոր ուսմանը ներուրով : Յայտնի է որ այս դպրոցին մայր լեզուն անգլիարէնն է, եւ այս լեզուով դաս կը տրուի միւս գիտութիւնները, որ պիտի են թուաբանութիւն, աշխարհագրութիւն, արիւն, Բաց յայտնանէ դատաստութիւն կը լըյալ նաեւ գաղղարէն, տաճկերէն, հայերէն եւ յունարէն լեզուաց : Երկրորդ է մեզ յիշատակել այս տեղս հայկաբանութեան եւ տաճկերէն լեզուին դասատուն, որ սուրբ Մեսրոպեան դպրոցին վաղեմի աշակերտներէն պարոն Հայկ Վազարոս Պաշապանեանն է : որ իւր պարկեշտ վարժութեւն ուսումնասիրան տեղեկութիւններով պատիւ կընէ յիշեալ մեր ուսումնասիրին :

Պուստապատի դպրոցին մէջ առայժմ բնան ալ շակերտ կան, որոյմէ հինգը հայ են եւ մնացեալ անգլիացի : Ինչպէս յայտնի է, այս դպրոցը բացուեցաւ բարեկամ հոգաւորութեամբ երկու անձ ժամանապատիւ անգլիացւոյ, որ են միստր Ռեմս Վուլթալ, որ բաղադրեալ երեւելի ու պատուաւոր վաճառականներէն մէկն է, եւ միստր Չարլս Վուստ որ իզմիրի Նիգիլիոյ հիւանդանոցին բժիշկն է :

Տարակոյս չկայ, թէ այս բարեխնամ անձին անձնաց անդադար ջանքերը եւ վերաբերեալութեամբ յիշեալ գիւղին դպրոցը օր քան օր եւս ազատել պիտի ծաղիկ ըստ ամենայն մասին :

ՍՈՒՆԻՏԻԿԱՆ ԼՈՒՐԻՔ

Ձմեռնիս, 17 Մարտի :

Մեր վերջի թիւէն ետեւ գրեթէ ամենեւին փոփոխութիւն մը չեղաւ քաղաքիս առեւտրոյն, որ հանդարտութեան մէջ է : Շէհրէն գինը իջաւ մինչեւ 16 1/2 - 17 1/2 ղուրուշի հօգսան : բայց այս գիններով եւս առնող չկայ : Բամպակները միշտ թուլ են : Սիթիկները վաճառու մը 117 ղուրուշի եղաւ չէրին : Փալամուտին գինները բարձր են, եւ այս պատճառաւ գլխաւոր առեւտուր մը չըլլար : Նիգիլիոյ տեսակ առաջին աշխարհին համար 75-80 ղուրուշի կը պահանջեն, երկրորդ տեսակին համար 70-72 ղուրուշի կենդինարը : իսկ իրիտիստի սպրանքը 110-115 ղուրուշի կարծէ : Բամպակեղէն ձեռագործները հանդարտութեւն մէջ են առհասարակ :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբաթ տնօրէն մը ուրբաթ օրը կը հրատարակուի : Տարեկան գինը 120 ղուրուշի կը խոստան : Իզմիրի քաղաքիս քաղաքացիները : Իզմիրի քաղաքացիները : Իզմիրի քաղաքացիները : Իզմիրի քաղաքացիները :

Կոստանդնուպոլիս Պէրութեան պատուէր պարոն Աւետիս : Պուստապատի Նիկիթման գործակալ Գալիէլ պաշտօնաւորներն :

Ազգաւորական Եւստիփան Գեորգեւ : Գահրէն Եղիպարեանց մահտեւի Յակոբ տալ : Յոպէն Բուստիլի եւ Միսիլալ Նահանգաց Ամիրի հիւպատոս Յակոբ տալ Ս : Մարտեան : Թրեմա Ազգեան Արաքսալ տալ : Կարին մահտեւի Յարութիւն տալ Ազգեանց : Դաւրեթ տալ Թովմա Ճէպրեանց : Պաղատա Նիգիլիոյ առաջին թարգման տալ Խաչիկ Միսիլեան : Կարլամա պարոն Յովհաննէս Ալիպեանց, կարգաւոր մարդարական ձեռնարկին Հայոց :

Հրատարակելու տեղ լրագրոյն :

Գրախա Գ. Պալատարեան :